«Կոնվերս Բանկ» ՓԲԸ Ճշգրտվող տոկոսադրույք

Ճշգրտվող տոկոսադրույքը «Կոնվերս Բանկ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) կողմից տրամադրվող ֆինանսավորումների հաստատուն անվանական տոկոսադրույք է, որը ֆինանսավորման պայմանագրի գործողության որևէ ժամանակահատվածում կարող է ճշգրտվել՝ բարձրանալ կամ նվազել:

Ճշգրտվող տոկոսադրույքը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$ՃՏ = ԲՏ + Հ + Գ_{ՀԵ}$$

Որտեղ.

ՃՏ - *Ճշգրտվող տոկոսադրույք:*

ԲՏ - *Բազային տոկոսադրույք:* Սահմանվում է Բանկի կողմից տարեկան երկու անգամ փետրվար և օգոստոս ամիսներին՝ հիմք ընդունելով մեկ Հիմնական ցուցանիշ և մեկ Երկրորդային ցուցանիշ, որոնք ֆինանսավորման պայմանագրի գործողության ամբողջ ընթացքում չեն կարող փոփոխվել: **ԲՏ**-ն հաշվարկվում և սահմանվում է՝ հիմք ընդունելով Հիմնական ցուցանիշը, իսկ Երկրորդային ցուցանիշը կիրառվում է այն դեպքում, երբ հաջորդ ժամանակահատվածի համար Հիմնական ցուցանիշն անհասանելի է:

Հ - *Հավելադիր:* Սահմանվում է ֆինանսավորման պայմաններով և ամրագրվում է ֆինանսավորման յուրաքանչյուր պայմանագրի դեպքում առանձին, ֆինանսավորման պայմանագրի գործողության ամբողջ ժամանակահատվածում հաստատուն է և ենթակա չէ փոփոխման:

$Գ_{ՀԵ}$ - *Հիմնական և Երկրորդային ցուցանիշները ճշգրտող գործակից:* **ՃՏ** հաշվարկում ներառվում է Երկրորդային ցուցանիշի կիրառման դեպքում և հաշվարկվում է որպես **ԲՏ** Հիմնական և Երկրորդային ցուցանիշների միաժամանակյա հասանելի վերջին 6 ամիսների պարզ թվաբանական միջինների (կլորացված 0.25 տոկոսային կետի ճշգրտությամբ) տարբերություն:

✓ ***ԲՏ Հիմնական ցուցանիշներ.***

- *ՀՀ դրամի դեպքում՝ ՀՀ պետական արժեկտրոնային պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերության կորի 6 ամիս ժամկետայնությամբ եկամտաբերությունը: Հասանելի է ՀՀ Կենտրոնական բանկի պաշտոնական կայքում՝ https://www.cba.am/hy/yield-curves-of-gb/ հղմամբ:*
- *ԱՄՆ դոլարի դեպքում՝ ԱՄՆ դոլարով 6 ամիս ժամկետայնությամբ ժամկետային ապահովված օվերնայթ ֆոնդային տոկոսադրույք (CME Term SOFR USD 6 Month): Հասանելի է «CME Group»-ի պաշտոնական կայքում՝ Term SOFR - CME Group, «Bloomberg Terminal» համակարգում՝ «TSFR6M», «Refinitiv Eikon» համակարգում՝ «SR6M» հղումներով:*
- *Եվրոյի դեպքում՝ Եվրոյով 6 ամիս ժամկետայնությամբ եվրոպական միջբանկային առաջարկի տոկոսադրույքը (EURIBOR 6 Month): Հասանելի է «Euribor»-ի պաշտոնական կայքում՝ 6 months Euribor rate, «Bloomberg Terminal» համակարգում՝ «EUR006M», «Refinitiv Eikon» համակարգում՝ «EURIBOR6MD» հղումներով:*

✓ ***ԲՏ Երկրորդային ցուցանիշներ.***

- *ՀՀ դրամի դեպքում՝ ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտ ֆիզիկական անձանցից ՀՀ դրամով ներգրավված 91 - 180 օր և 181 օրից մինչև 1 տարի ժամկետայնությամբ ավանդների միջին կշռված տոկոսադրույքների պարզ թվաբանական միջինը: Հասանելի է ՀՀ Կենտրոնական բանկի պաշտոնական կայքում՝ https://www.cba.am/file_manager/Statistics_reports/mfs/14_Deposit_and_lending_rates_arm.xlsx հղմամբ:*
- *ԱՄՆ դոլարի դեպքում՝ ԱՄՆ գանձապետական պարտատոմսերի եկամտաբերության կորի 6 ամիս ժամկետայնությամբ եկամտաբերությունը: Հասանելի է «U.S. Department of the Treasury»-ի պաշտոնական կայքում՝ Daily Treasury Par Yield Curve Rates, «Bloomberg Terminal» համակարգում՝ «H15T6M», «Refinitiv Eikon» համակարգում՝ «US6MT» հղումներով:*
- *Եվրոյի դեպքում՝ Գերմանիայի՝ եվրոյով պետական պարտատոմսերի եկամտաբերության կորի 6 ամիս ժամկետայնությամբ եկամտաբերությունը: Հասանելի է՝ «Bloomberg Terminal» համակարգում՝ «YCGT0016», «Refinitiv Eikon» համակարգում՝ «DE6MT» հղումներով:*

Նշված հղումների փոփոխումը որևէ ազդեցություն կամ հետևանք չի կարող ունենալ **ԲՏ** *հաշվարկման հարցում: Տեղեկության ստացումը մատչելի չլինելու դեպքում՝ Բանկը վարկառուի պահանջով կտրամադրի այն՝ Բանկի և վարկառուի համար ընդունելի էլեկտրոնային կապուղիների միջոցով ուղարկելով և/կամ Բանկի տարածքում առձեռն հանձնելով:*

ԲՏ-*ն հաշվարկվում է որպես դրա հիմքում ընկած և կիրառվող ցուցանիշի՝ տվյալ ժամանակահատվածի վերջին 6 ամիսների պարզ թվաբանական միջին (կլորացված 0.25 տոկոսային կետի ճշգրտությամբ): Այն պարագայում, երբ* **ԲՏ**-*ն բացասական մեծություն է,* **ճՏ** *հաշվարկման համար հիմք է ընդունվում* **ԲՏ**-*ի 0 արժեքը:*

Եթե տվյալ ժամանակահատվածի համար հաշվարկված և գործող **ԲՏ**-*ների տարբերությունը*

- ✓ *կազմում է 1 տոկոսային կետից ավելի՝ ենթակա է պարտադիր փոփոխման,*
- ✓ *չի գերազանցում 1 տոկոսային կետը՝ կարող է փոփոխվել:*

ԲՏ-*ն կարող փոփոխվել ավելի փոքր չափով, քան հաշվարկված և գործող* **ԲՏ**-*ների տարբերությունն է, բայց 0.25 տոկոսային կետից ոչ պակաս:*

Երբ **ԲՏ** հիմքում ընկած Հիմնական և Երկրորդային ցուցանիշների միաժամանակ անհասանելի (չեն հրապարակվում) լինելու պատճառով՝ հաջորդ ժամանակահատվածի համար անհնարին է դառնում **ճՏ** սահմանումը, **ճՏ** սահմանելու նպատակով՝ Բանկը, հիմք ընդունելով ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշները, **ԲՏ** հաշվարկման և սահմանման համար ընտրում է Հիմնական և Երկրորդային ցուցանիշներին համանման այլ ցուցանիշ:

- ✓ Եթե Համանման ցուցանիշին անցումը տեղի է ունենում Հիմնական ցուցանիշից, ապա **ճՏ**-ն հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{ճՏ} = \text{ԲՏ} + \text{Հ} + \text{Գ}_{\text{ՀՀ}},$$

Որտեղ.

ճՏ - *ճշգրտվող տոկոսադրույք:*

ԲՏ - *Բազային տոկոսադրույք:*

Հ - *Հավելադիր:*

$\text{Գ}_{\text{ՀՀ}}$ - *Հիմնական և Համանման ցուցանիշները ճշգրտող գործակից:* Հաշվարկվում է որպես **ԲՏ** Հիմնական և Համանման ցուցանիշների միաժամանակյա հասանելի վերջին 6 ամիսների պարզ թվաբանական միջինների (կլորացված 0.25 տոկոսային կետի ճշգրտությամբ) տարբերություն:

- ✓ Եթե Համանման ցուցանիշին անցումը տեղի է ունենում Երկրորդային ցուցանիշից, ապա **ճՏ**-ն հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{Տ} = \text{Բ} + \text{Հ} + \text{Գ}_{\text{ՀԵ}} + \text{Գ}_{\text{ԵՀ}},$$

Որտեղ.

ճՏ - *ճշգրտվող տոկոսադրույք:*

ԲՏ - *Բազային տոկոսադրույք:*

Հ - *Հավելադիր:*

$\text{Գ}_{\text{ՀԵ}}$ - *Հիմնական և Երկրորդային ցուցանիշները ճշգրտող գործակից:* Հաշվարկվում է որպես **ԲՏ** Հիմնական և Երկրորդային ցուցանիշների միաժամանակյա հասանելի վերջին ամիսների պարզ թվաբանական միջինների (կլորացված 0.25 տոկոսային կետի ճշգրտությամբ) տարբերություն:

ԳԵՀ - *Երկրորդային և Համանման ցուցանիշները ճշգրտող գործակից:* Հաշվարկվում է որպես **ԲՏ** Երկրորդային և Համանման ցուցանիշների միաժամանակյա հասանելի վերջին 6 ամիսների պարզ թվաբանական միջինների (կլորացված 0.25 տոկոսային կետի ճշգրտությամբ) տարբերություն:

Ճշգրտվող տոկոսադրույքի բարձրացման և նվազեցման առավելագույն չեմը սահմանվում է +/- 2.5 տոկոսային կետ:

Ճշգրտվող տոկոսադրույքի փոփոխությունները.

- ✓ *«Բնակարանային հիպոտեկային կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված ֆինանսավորումների դեպքում կարող են կիրառվել ոչ շուտ, քան վարկառուին տեղեկացնելուց 7 աշխատանքային օր հետո:*
- ✓ *Սպառողական և այլ անհատական ֆինանսավորումների դեպքում կարող են կիրառվել ոչ շուտ, քան վարկառուին տեղեկացնելուց 7 աշխատանքային օր հետո, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:*
- ✓ *Կորպորատիվ վարկային պայմանագրերի դեպքում կարող են կիրառվել վարկառուի հետ կնքված պայմանագրով սահմանված կարգի համաձայն:*